ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 59 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մարտի 26-ի N 01/06-1/1346-13 գրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժշկական համալիրի շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու և համալիրի հողօգտագործման փաստաթղթերի ձևակերպումը ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25122013-08-0002) Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 3/7 հասցեի 0,32421 (զրո ամբողջ երեսուներկու հազար չորս հարյուր քսանմեկ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Նվիրաբերության հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել հողօգտագործողի միջոցների հաշվին:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____